

րուն եւ կողակներուն մէջ շինուած մողայիքները քրիստոնէից յատուկ թեւադրիչ դասեր կը պարունակէին իրենց նկարէն պատկերներովը, անոնք կը նկարէին նաև Փրկչին եւ Առաքելոց պատկերները: Մողայիքի արուեստաւորները՝ Փրկչին փառքը պանծացնելու տեսչով լեցուած՝ կը տեսնուի որ ընդհանրապէս կը խուսափէին նկարել Անոր խոնարհ ծագումը եւ չարչարանքը, Գրիստոսի մտուրը, ծնունդը, խաչելութիւնը՝ որ վերածնութեան դարուն նկարիչներուն սիրելի նիւթերն էին. առաջին եօթն դարերու մողայիք շինողները չէին մօտենար անոնց, միևնոյն նպատակաւ. նահատակաց յաղթանակը ի մտի ունէին, քան թէ անոնց մարտիրոսութիւնը. (Ներածութիւն, Les Mosaïques Chrétiennes du IVme au Xme siècle):

Զիթենաց լերան Հայոց Ս. Յովհ. Կարապետի վանքի այդ մողայիքները յայտնի է թէ հեռաւոր թուականէ մը կը հասնին. այդ մողայիքի վարպետներն ալ միևնոյն ոգւով շարժած են՝ հեթանոսականը խառնելով քրիստոնէականին հետ, ինչպէս ցոյց կու տան անոնց լուսանկարուած մանրանկարները:

Գալով վերոյիշեալ չորս արձանագրութեանց մէջ յիշուած անձերուն ինքնութեան, պէտք է ըսել թէ շատ դժուար է ճշդել այդ պարագան: Թիւ 3 եւ 4 արձանագրութեանց մէջ յիշուած անձերուն վրայ տեղեկութիւն մը չունինք, բայց թիւ 1 եւ 2 արձանագրութեանց մէջ յիշուածներուն մասին կարելի է հաւանական կարծիք մը յայտնել: Glermont-Gannau իր վերոյիշեալ գործին մէջ (էջ 332) կ'ընդունի թէ թիւ 2 արձանագրութեան Արտաւանը պարսկահայ մըն է, Յուստինիանոսի օրով, կուսակալ եւ զօրապետ, համաձայն De Muraltի Chronographie Byzantineի տեղեկութեան (Հտր. 1. էջ 190 եւ 203): Մենք թիւ 1ի Վաղանը ուղղագրական սխալ նկատելով՝ հաւանական կը համարինք որ ըլլայ Վահան. եւ եթէ ընդունինք այդպէս, այն ատեն Պաղեստինցի Պրոկոպիոս պատմիչին դիմելով՝ կը տեղեկանանք թէ՛ Արտաւան եւ Վահան Արշակունի երկու եղբայրներ էին, եւ Պարսկաստանէն փախչելով ապաստանած էին Բիւզանդիոն: Այս երկու եղբայրները մեծ ծառայութիւն մատուցած էին Բիւզանդական պետութեան: Արտաւան եղաւ մեծ գուքս եւ Վահան մեծաւ պատերազմին մէջ: Յուստինիանոսի կայսրութեան յառաջդիմութեան եւ զարգացման ստորունի եղած են այս հայալզի երկու